

ԱԿԱՆԱՎՈՐ ՏԵՍԱՐԱՆ-ԼԵԶՎԱՐԱՆԸ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱՐԱՆ-ՀԱՅԱԳԵՏԸ
(ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Զառուկյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ժամանակակից հայ լեզվաբանության ակնառու ներկայացուցիչներից մեկի՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, հանրագիտության գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր Գ. Զառուկյանի ծննդյան 70 և գիտամեկավարական գործունեության 45-ամյակը:



Գ. Զառուկյանը լեզվաբանություն մասով գործեց որպես հայագետ: Այսօր հայերենագիտության մեջ չկա որևէ բնագավառ, որի ուսումնասիրությանն անդրադարձած և արժեքավոր ու հեռանկարային նորույթ ներմուծած չլիներ նա. հայ լեզվաբանության պատմություն, հայերենի համեմատական ֆոնետիկայի, հայոց լեզվի պատմություն, հայոց լեզվի տեսություն, հայ բարբառագիտություն և այլն: Մեկայն Գ. Զառուկյանը բնական, բնական միջազգային լեզվաբանական շրջանակներում հայտնի է նաև որպես բնական լեզվաբանության հմուտ և ինքնատիպ մասնագետ, որը յուրովի է մտնեցել բազմաթիվ խնդիրների, հանգես է կնքում մարձակ վարկածներով:

Գ. Զառուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Շահնազար գյուղում (այժմ Կալինինոյի շրջանի Մեծավան գյուղ): Նախ սովորել է տեղի դպրոցում, ապա՝ Երևանի Ս. Շահումյանի անվան դպրոցում: 1937—1941 թթ. կրթությունը շարունակել է Երևանի համալսարանում: Ապա ընդունվել է ասպիրանտուրա: Ասպիրանտական ուսումնառությունն ընդմիջվել է զինվորական ծառայությամբ (1942—1943): Ասպիրանտուրան ավարտելուց հետո (1947) պաշտպանել է ֆեդերատիվական դոկտրինան: Մինչև 1950-ական թվականները Գ. Զառուկյանը գրեթե օղիչ չի հրատարակել: Գիտականի բարեխղճությունն ու ազնվությունը նրան բույլ չի տվել տուրֆ տալու ժամանակի լեզվաբանական սիրող ուսմունքին:

1954 թ. Գ. Զառուկյանը հրատարակեց իր առաջին մենագրությունը «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5—11-րդ դդ.)», որը հայ լեզվաբանական մտքի՝ որոշակի ժամանակաշրջանի պատմության շարադրանքն էր: Նրա դոկտորական դիսերտացիան՝ «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհագրի հարցերը 19—19-րդ դդ.» (անտիպ) բոլոր էությունը առաջին մենագրության շարունակությունն էր: Փաստա-

րեն Գ. Զառնուկյանը առաջինն էր, որ շարադրեց հայ բնակչության գրեթե ամբողջական պատմությունը և նոր բարձրության հասցրեց հայ լեզվաբանության պատմությունը:

Նրա հաջորդ մենագրությունը դարձյալ հայերենագիտական էր՝ «Հին հայերենի հոլովման «իստիմ» և նրա ծագումը» (1959 թ.): Այս տարիներին նա հրատարակում է նաև մի շարք (այբերենագիտական հոդվածներ, այդ թվում նաև հայոց լեզվի պատմության շրջանաբաժանմանը նվիրված հոդվածը: Այն ուշագրավ է հարցին ներսկզբի մոտեցմամբ: Հետագայում այս շրջանաբաժանումը Գ. Զառնուկյանը կհիմնավորի իր այլ աշխատություններում: 1960-ական թվականների գործերը ավետեցին ինքնատիպ հայերենագիտի հայտնությունը:

1960 թ. լույս է տեսնում «Լեզվաբանության պատմության» 1-ին հատորը, 1962 թ.՝ 2-րդ հատորը: Նման աշխատանքի ձևաբանումն ինքնին սխառն էր: Քերես մինչև այժմ էլ համաշխարհային գիտական գրականության մեջ չկա լեզվաբանության պատմության նման ամբողջական շարադրանք՝ հնագույն ժամանակներից մինչև XX դ. 50-ական թվականները: Կարելի է հասկանալ ժամանակակից ֆրանսիացի ակադեմիկոս լեզվաբան Է. Բենվենիստի գործունեությունը. «Առաջին իսկ հայացքից այն ցնցում է կատարված աշխատանքի հսկայածավալությամբ, որը ներկայացնում է մի այդպիսի համադրություն և բազմապիսի աշխատանքների ամփոփում»^{*}: Սակայն այս աշխատանքը սուս շարադրանք չէ: Գիտնականը փորձել է լեզվաբանական մոտի գարգացման պատմությունը շրջանաբաժանման ենթարկել, բնութագրել լեզվաբանության զանազան ուղղություններն ու դպրոցները: Շատ հաճախ նա ինքն էլ այս կամ այն շրջանի և այս կամ այն ուղղության անվանում առաջարկում՝ հիմնվելով դրանց կազմի հատկանիշների վրա: Այս աշխատության կարևոր արժանիքներից մեկն է նաև այսպես կոչված «լեզվաբանական լեզվի» հրաժարումը:

1960-ական թվականները Գ. Զառնուկյանի գիտական գործունեության մեջ կարևոր է բնութագրել որպես հայոց լեզվի ծագման ու նախադրյալի շրջանի պատմության ուսումնասիրության շրջան: Նա բնում է հայերենի և Առաջավոր Ասիայի ու Բալկանյան թերակղզու հին լեզուների առնչությունները: Այստեղ հատկապես պետք է առանձնացնել «Հայաստանի լեզուն և նրա առնչությունը հնդեվրոպական լեզուներին» աշխատությունը, որը Գ. Ղափանցյանից հետո ներույթ էր այս բնագավառում: Առկա սուղ փաստերի խոր ուսումնասիրությամբ և նոր մեթոդաբանություններով Գ. Զառնուկյանը համոզիչ կերպով ապացուցում է. հայաստանի հնդեվրոպական լեզուն է և, քերես, պատկանում է անատոլիական (խեթա-լուվիական) հյուսիսին: Հետագայում նա մի քանի անգամ ևս անդադարձել է հայաստանի խնդրին՝ ամեն անգամ կատարելագործելով ու լրացնելով իր վարկածը:

Հայերենի և առաջավոր Ասիայի ու հնդեվրոպական լեզուների առնչությունները բնեկյան Գ. Զառնուկյանը ընդլայնում է՝ ուսումնասիրության ժամանակային սահմանները՝ խորանայով նաստրատիկ լեզվաբանության ոլորտը: Ի դեպ, նա հայ լեզվաբաններից առաջինն էր (և այժմ միակը), որն զբաղվել է նաստրատիկ լեզվաբանության հարցերով: Նա է առաջինը նաստրատիկ ուսումնասիրությունների շրջանակներում ներառել խուրի-աւարական լեզուները: Հարկ է նշել, որ Գ. Զառնուկյանը առաջինն է նշել հնդեվրոպական ձայնիչների համապատասխանությունը կովկասյան լեզուների կառուցվածքին, սակայն հետագայում չի անդադարձել այդ խնդրին:

Այս տարիներին Գ. Զառնուկյանը զբաղվել է նաև կիպրոսի հին լեզվի, այսպես կոչված էփեսիպրոսիենի վերծանությամբ. նա փաստերի համակարգմանի բնութայնությամբ առաջ է քաշել այն վարկածը, որ էփեսիպրոսիենը ցեղակցական կապ ունի իստրի-աւարական լեզուների հետ:

1970-ական թվականները կարելի է բնութագրել որպես տեսական լեզվաբանության խրճետների ուսումնասիրության շրջան: Գեղև 1969 թ. լույս տեսած «Հայոց լեզվի գարգացումը և կառուցվածքը» մենագրության մեջ արդեն պարզորոշ ուղղված է լեզվական երևույթների համալիր բնութագրման շառնուկյանական մոտեցումը: Ձևի և բովանդակության կապի ու միասնության Գ. Զառնուկյանի բնութագրումը էպես տարբերվում էր նախորդներից, որոնք գերազանցում էին կա՛մ ձևը (ձևապաշտականներ), կա՛մ իմաստը (իմացաբանականներ): Ձևը և բովանդակությունը Գ. Զառնուկյանի բնութագրումը միասնական են և՛ յուրաքանչյուր ձև ունի իր բովանդակությունը: Ձևը, լինելով անհնայա, հեշտությամբ է բնկալվում, իսկ բովանդակության սահմանը ճշտելը պահանջում է վերացարկյան մեծ ունակություն: Գ. Զառնուկյանը օժտված է այդ ունակությամբ:

^{*} Է. Բենվենիստի՝ Գ. Զառնուկյանին հղած նամակից:

Այս սկզբունքները եւ նախ կիրառում է հայերենի ուսումնասիրություններում: «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ» (1974) մենագրության մեջ Գ. Զահուկյանը, ընդհանրացումների է հանգում՝ որոշակի էջգրումներ կատարելով ընդհանուր լեզվաբանական մի շարք կառուցողականների ըմբռնման մեջ: Ուշագրավ է այս առումով խոսքի մասերի դասակարգման՝ Գ. Զահուկյանի առաջարկած եղանակը, որը հեղինակն անվանում է գոյարանական (սուբստանցիոնալ): Լեզվական երևույթների ընդհանուր կաղապարման մեթոդը, որը հեղինակը կիրառում է հետևողականորեն և խիստ սկզբունքներով, հաջորդ աշխատություններում հետզհետե բյուրեղանում է ու «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (1978) աշխատության մեջ ի վերջո ձևակերպվում լեզվի համընդհանուր կաղապարի տեսքով: Կաղապարումը հեթաղում է վերացարկման որոշակի աստիճան, իսկ մշակել համընդհանուր կաղապար, որը կիրառելի լինի լեզվական բոլոր երևույթների և բոլոր լեզուների նկատմամբ, նշանակում է վերացարկման առավել բարձր աստիճան: Գ. Զահուկյանն այս աշխատության մեջ, թերևս, հասել է առավելագույնին՝ թե՛ կարգերի, թե՛ հարաբերությունների վերացարկման իմաստով:

Հայ բարբառների ուսումնասիրությանը նոր և ինքնատիպ մոտեցում էր Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972): Հեղինակը բազմաճանաչելի (100 հատկանիշներով) տվյալների վիճակագրությամբ կատարում է հայ բարբառների դասակարգումը, որոշում բարբառախմբերը, միջբարբառախմբերը, բարբառներն ու հեթաղաբարբառները: Հատկանիշների որոշակի ֆանակական տվյալներով զտորոշում է խոսվածներն ու բարբառները: Այս աշխատությունը միաժամանակ հայերենի պատմական բարբառագիտության սկիզբ կարելի է համարել: Գ. Զահուկյանն այս իմաստով նախնաշնչել է ապագա գործունեության ուղիները:

Բարբառների բազմաճանաչելի դասակարգման սկզբունքը և վիճակագրական բարբառագիտության մեթոդը, որոնք իր իսկ մշակումներն են, Գ. Զահուկյանը կիրառել է «Հայերենի համեմատական ֆերականություն» (1982) աշխատության մեջ՝ հայերենի և մյուս հնդեվրոպական լեզուների մեծավորության հարցը պարզելու համար: Համեմատական ֆերականության մեջ դեռևս ոչ ոք նման մոտեցում չի ցուցաբերել: Վիճակագրական տվյալները որոշակի հստակություն են ապրիս իրենի վիճակի մասին: Հարկ է նշել, որ բոլոր այդ տվյալները թերևս հետագայում կարող են հեղրավել՝ այլ հնդեվրոպական, մասնավորապես, հին և մոռած լեզուների մասին մեր դիախիզների ընդլայնմանը գուցենթաց: Բայց ժխտել Գ. Զահուկյանի սկզբունքի և մեթոդի առավելությունը անհնար է: Գ. Զահուկյանի այս գիրքը Ա. Մեյսի «Ուրվագիծ հայերենի համեմատական ֆերականության» աշխատությունից հետո հայերենի համեմատական ֆերականությունը բարձրացնում է նոր աստիճանի: Այն ամփոփում է այս բնագավառում Ա. Մեյսից հետո եղած նվաճումները՝ դարձյալ Գ. Զահուկյանի ինքնատիպ մոտեցմամբ:

Այս ժամանակաշրջանում Գ. Զահուկյանը միաժամանակ աշխատում էր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» աշխատության վրա, որը լույս տեսավ 1987 թ.:

Հայերենի (թերևս նաև որևէ այլ լեզվի) նախագրային շրջանի պատմության վերաբերյալ նման ծավալուն ու բովանդակալից աշխատություն չի եղել: Հեղինակն այս գրքում ամփոփել է հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում տարիների իր աշխատանքը, և այս կոթողային աշխատանքի համար 1988 թ. արժանացել ՀԽՄՀ պետական մրցանակի:

Գ. Զահուկյանը մեծ կարևորություն է տալիս դասակարգմանը (չբանաբանականում ևս դասակարգում է): Եվ դա ինքնանպատակ չէ: Գիտական ուսումնասիրությունը առաջին հերթին պահանջում է դասակարգում: Եվ որպես բարեխիղճ գիտնական, Գ. Զահուկյանը միշտ էլ ձգտել է դասակարգել ուսումնասիրության առարկան, հշտել սահմանները: Այսօր՝ նրա առաջարկած զանազան դասակարգումներն ու շրջանաբաժանումները ընդունելություն են գտել լեզվաբանների շրջանում: Այդ դասակարգումներից մի ֆանիսը հիշեցինք վերևում՝ հայոց լեզվի պատմության (նաև նախագրային շրջանի պատմության) շրջանաբաժանումը, բարբառագիտության պատմության շրջանաբաժանումը, լեզվաբանության (նաև հայ լեզվաբանության) պատմության շրջանաբաժանումը, լեզվաբանական մեթոդների դասակարգումը, հայերենի բարբառների (նաև հ.՝. լեզուների) բազմաճանաչելի դասակարգումը և այլն: Բերենք մի տիպական օրինակ: Լեզվաբանական գիտակարգների դասակարգման Գ. Զահուկյանի փորձը առաջինն էր այս ուղղությամբ, և հրապարակումից (1976 թ.) 13 տարի անց նրա մասին այսպես է արձագանքել գերմանացի լեզվաբան Ռուֆ Կյոդերիցը. «Լեզվաբանական գիտակարգների դասակարգման հարցը անշուշտ հստակ չէ, և մինչև այժմ նաև բաշխման և կանոնա-

կարգման համընդհանուր ընդունելության արժանացած սկզբունք: Սակայն այս ուղղությամբ կա լավ և օգտակար սկիզբ: Ես նկատի ունեմ Ջ. Լայբնիցի կամ Գ. Ջանուկյանի փորձը:

Ի. Ջանուկյանի գիտական վաստակի այս հակիրճ նկարագրության մեջ հաճախ էինք շեշտում առաջինը, առաջիններից մեկը: Առաջինը լինելու ձգտումը չէ, որ Գ. Ջանուկյանի մղում է առաջ: Նրան գրավում է գիտական նշարտությունը: Եվ նա, վերանայելով նախորդների աեսակետներն ու վարկածները՝ սեփական ուսումնասիրություններով ու վերլուծություններով, շատ դեպքերում հանգել է նոր հզորացությունների:

Այսօր Գ. Ջանուկյանը զբաղված է լեզվի համընդհանուր կադապարի հիման վրա լեզվի համընդհանուր տեսության շարագրմամբ: Մաղթենք նրան փառառդյուն, հրկար կյանք և ծրագրերի իրականացում:

Վ. Գ. ԶԻՀԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների բեկնածու: